

Եթէ Եէնիմահալլէի վարժարանի մէջ աշակերտ մը կռիւ ընէ՝ իսկոյն զինքը կ'յանդիմանեն ըսելով. «Կ'երեւի, որ Սէլամսըզի քահանաները կ'նքած են զքեզ»:

Իսկիւտարի օդը խիստ է. տկարները անմիջապէս կ'առնէ կտանի անդիի աշխարհ:

Ներքին բերքն է հրաժարեալ պատրիարքներ, որ կու գան այս թաղին մէջ կ'նստին տան մը մէջ, որ ձրի կտրուի. թէպէտեւ շատ մը պատրիարքներ առանց վարձքի նստելու տուն մ'ունենալով հանդերձ՝ չեն ուզեր իրենց հրաժարականը տալ:

Ժ.

ԹՕԲ ԳԱԲՈՒ

–Կ'աղաչեմ, այս թաղին անունը մի՛ տար, եղբա՛յր:

–Ինչո՞ւ:

–Վասնզի այս թաղին անունը տխուր յիշատակներ կ'արթնցնէ մտքիս մէջ:

–Ի՞նչ պատահեցաւ:

–Երկու տարուան տղաս զոհ տուի այդ թաղին:

–Օդը այդչափ գե՞շ է:

–Ո՛չ:

–Շիրա՛կ գրուցէ, եթէ գէշ է՝ մենք ալ չերթանք:

–Ո՛չ, բարեկա՛մ, օդը պատուական է:

–Ի՞նչպէս եղաւ, որ տղադ մեռաւ հոն:

–Կ'իրակի առաւօտ մը տղաս հետս առի ու եկեղեցին գնացի. ես ալ ուրիշներու պէս աղօթքիս զբաղած էի... մէյ մ'ալ ժամերգութեան միջոցին անանկ ձայն մ'ելաւ, որ... ա՛հ, մինչեւ այսօր ականջէս չէլնէր այդ ձայնը... ա՛հ, եղբա՛յր, անանկ ձայն մ'ելաւ, որ տղաս վախցաւ, մարեցաւ, ինկաւ:

–Տէ՛ր ողորմեա... որոտո՞ւմ էր:

–Ո՛ւր էր թէ որոտում ըլլար... անբացատրելի ձայն մ'էր:

–Թնդանօ՞թ էր:

–Երանի թէ թնդանօթ ըլլար... անմեկնելի բան մ'էր:

–Ի՞նչ էր ուրեմն: